C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 25

02.09.2024



Կարիերայի կենտրոնի պատասխանատուն՝ ՍԵՊՌ կամպուսում



ՍԵՊՖԱ-ի Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանը Էրազմուս+ ծրագրի շրջանակներում հունիսին այցելեց Ֆրանսիայի Լիոն քաղաքում գտնվող ՍԵՊՌ կամպուս, որտեղ հնարավորություն ունեցավ ծանոթանալու ՍԵՊՌ-ի գործունեությանը, մասնավորապես, Կարիերայի կենտրոնի աշխատանքներին, կատարելու մասնագիտական փոխանակումներ, ներկա գըտնվելու տարեվերջյան երեկոյին, հանդիպելու շրջանավարտներին և գործատուներին, ինչպես նաև կատարելու մշակութային այցեր: Այցը կարևոր էր նաև մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանությունն ուսումնասիրելու, կարիերայի խորհրդատուի ազգային և մարզային կենտրոններ այցի, շրջանավարտների ցանցի կառուցվածքն ուսումնասիրելու, ինչպես նաև ներառականություն ունեցող երեխաների հետ աշխատանքի հմտություններին ծանոթանալու առումով:



Զարգացնում ենք քայլարշավային և էկոտուրիզմը

Ֆրանսիական ԱՖՐԱՏ ասոցիացիայի, Հայաստանի ալպինիզմի և լեռնային տուրիզմի ֆեդերացիայի և ՍԵՊՖԱ-ի միջև կնքվեց եռակողմ հուշագիր: ԱՖՐԱՏ-ը Ֆրանսիայում հայտնի կազմակերպություն է, որը զբաղվում է քայլարշավային գիդերի վերապատրաստմամբ: Հուլիսին ԱՖՐԱՏ-ն իր հարկի տակ ընդունեց ՍԵՊՖԱ-ի թիմին: Գործընկերային հանդիպման ընթացքում քննարկվեցին երկկողմ համագործակցության պայմանավորվածությունները, տեխնիկական ու ֆինանսական տարբեր հարցեր: ՍԵՊՖԱ-ի թիմը նաև հնարավորություն ունեցավ մասնակցելու հիանալի քայլարշավների Վերկորի գեղատեսիլ բնության գրկում՝ անցած տարի Հայաստան այցելած ու արդեն հարազատ դարձած կամավորների հետ:



ՍԵՊՖԱ-ի տնօրենը՝ Moving TVET to the Top of the Global Agenda WorldSkills 2024 համաժողովին

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը Լիոնում որպես բանախոս մասնակցեց ,Moving TVET to the Top of the Global Agenda WorldSkills 2024 համաժողովին: Նա իր ելույթում անդրադարձավ մասնագիտական կրթության ոլորտում ֆրանկոֆոն նախաձեռնություններին և միջազգային մակարդակում մասնագիտական հմտությունների զարգացման մեջ դրանց կարևորությանը: Նշենք, որ WorldSkills 2024 միջազգային 47-րդ մըրցույթն անցկացվում էր Ֆրանսիայի Նախագահ պարոն Էմանուել Մակրոնի հովանավորությամբ: Այն միավորել էր



1500 տաղանդավոր երիտասարդների ավելի քան 65 երկրներից, որոնք մրցում էին 62 մասնագիտություններով:

Միրա Ներսիսյանը՝ WorldSkills 2024-ի Best of Nation մրցանակակիր

Կայացավ WorldSkills Lyon 2024 միջազգային 47-րդ մրցույթը. Հայաստանի հմտությունների ազգային թիմը պատվով ներկայացավ մրցույթին: ՍԵՊՖԱ-ի Կարի արտադրության տեխնոլոգիա մասնագիտության ուսանողուհի Միրա Ներսիսյանը մրցույթի չորս օրերի ընթացքում ներդրեց իր ողջ ներուժն ու հմտությունները և արժանացավ Best of



Nation մրցանակին: Միրա Ներսիսյանին մրցույթի նախապատրաստելու գործում իրենց մեծ ներդրումն ունեին ինչպես արտադրական ուսուցման վարպետները, այնպես էլ ՍԵՊՌ-ը և Լիոնի Մետրոպոլիան, ՍԵՊՌ-ի դասավանդող Նատալի Վիալլան: One School One Country ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությանը Լիոնում ջերմ ընդունելության արժանացավ:

Մեծ հնարավորություն մեր շրջանավարտների համար

Լիոնի Մետրոպոլիայի հրավերով ՍԵՊՖԱ-ի Խոհարարական գործ մասնագիտության շրջանավարտներ Լևոն Մարտիրոսյանը և Ռոբերտ Հակոբյանը հնարավորություն



ունեցան մասնակցելու International Youth Forum-ին: Այս միջոցառման ընթացքում տարբեր երկրների երիտասարդները հանդիպեցին փորձագետների, ձեռնարկությունների և կառավարությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելով մասնագիտական աշխարհի մարտահրավերները: Ֆորումը կարևոր հարթակ է գաղափարներ փոխանակելու և ներկայիս խնդիրները լուծելու նպատակով ռազմավարություններ մշակելու համար:

Համագործակցություն և փորձի փոխանակում

ՍԵՊՖԱ-ն շարունակում է իր հյուրընկալ դռները բացել և իր հարկի տակ ընդունել հայաստանյան այլ քոլեջների ուսանողներին: Այս անգամ կենտրոնը հյուրընկալեց Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի Ատամնատեխնիկական գործ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներին: Վերջիններս հնարավորություն ունեցան գործնական պարապմունքի շրջանակներում ծանոթանալ դուպլիկատ մոդելի ստացման եղանակին:



Պետանքը Երևանում է...

Ամառը թեժ էր ՍԵՊՖԱ-ում. Օգոստոսի 13-27 ՍԵՊՖԱ-ի ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալու և բացահայտելու Ֆրանսիայի հարավում մեծ տարածում ունեցող Պետանք խաղը, ստանալու ֆրանսիացի փորձառուների խորհուրդները և մասնակցեցին փոխանակումներին ֆրանսիացի երիտասարդների հետ: Ծրագիրն իրականացվեց ACFOA Septèmes-Les-Vallons ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակներում: Պետանքի խաղադաշտի հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվյե Դըկոտինյին, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ պարոն Արմեն Փամբուխչյանը, Երևանի փոխքաղաքա-



պետ, ՍԵՊՖԱ-ի ՀԽ անդամ պարոն Լևոն Հովհաննիսյանը, ՍԵՊՖԱ-ի տնօրեն տիկին Գոհար Գրիգորյանը, Դադիկյան հիմնադրամի ներկայացուցիչներ Ժան Դադիկյանը, Մարինե Սարգսյանը և Ռիչարդ Մակինաջյանը, Septèmes ACFOA ասոցիացիայի անդամները՝ նախագահ Լյուդովիկ Պասքինուչիի գլխավորությամբ, ծրագրին մասնակցող հայ և ֆրանսիացի երիտասարդները, ինչպես նաև նրանց ղեկավարներ Էդիտա Սարգսյանը, Էմիլի



Ժյուլիենը, Ստիվեն Ինկարդոնան և Նիկոլա Մարգոսյանը:

Մեր ուսանողը UFAR-ում

ՍԵՊՖԱ-ի «Հրուշակագործության տեխնոլոգիա» մասնագիտությամբ ուսանող Վահե Գրիգորյանը մասնակցեց UFAR-ում մեկնարկած Խաղաղության շրջիկ դպրոցի «Գլոբալ կառավարում և առաջնորդություն» դասընթացին: Դասընթացը վարեցին Ֆրանսիայի նախկին վարչապետ Ժան-Պիեր Ռաֆարենը և քաղաքագետ, միջազգային հարաբերությունների մասնագետ Բերտրան Բադին:



ՍԵՊՖԱ-ն՝ արցախցիներին

Ովորի՛ր և վաստակի՛ր Արցախ ծրագրի շրջանակներում տեղահանված արցախցիների համար ՍԵՊՖԱ-ում բացահայտվեցին խոհարարության և հրուշակագործության գաղտնիքները: Դասընթացներին մասնակցում էին գրեթե 100 շահառուներ՝ ոմանք նոր մասնագիտություն ձեռք բերելու, ոմանք էլ եղած գիտելիքն ու հմտությունները հարըստացնելու նպատակով: «Լեռնային Ղարբաղի փախստականների մարդասիրական օգնություն և ներգրավում» ծրագիրը իրականացրեց Հայկական բարեգործական ընդհանուր միությանը: Ծրագրի բոլոր մասնակիցները ՍԵՊՖԱ-ի կողմից ստացան իրենց ավարտական վկայականները: Նրանցից ոմանք արդեն սկսել են մասնագիտական գործունեություն ծավալել, մի մասն էլ ակտիվ հանդիպումների մեջ է գործատուների հետ :



Ֆրանսիայի դեսպանը վկայականներ հանձնեց

Կանանց աջակցման կենտրոնի և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ կազմակերպված կարճաժամկետ դասընթացների արցախցի մասնակիցները ստացան իրենց վկայականները: Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվյե Դըկոտինյին անձամբ հանձնեց վկայականները: Դասընթացի մասնակիցների համար պատրաստված էր գեղեցիկ անակնկալ՝ մասնագիտական գործիքներ: ՍԵՊՖԱ-ում կազմակերպված կարճաժամկետ դասընթացները մեծ հնարավորություն էին ծանոթանալու մասնագիտական հմտություններին և գործնական աշխատանք կատարել հմուտ դասավանդողների մոտ :



Դիպլոմների հանձնում ՍԵՊՖԱ-ում

ՍԵՊՖԱ-ում տեղի ունեցավ 2023-2024 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Մինչ հանձնման արարողության մեկնարկը՝ հիշարժան օրվա առթիվ իր ողջույնի և շնորհավորանքի խոսքը ուղղեց տնօրեն Գոհար Գրիգորյանը: Յուրաքանչյուր կուրսի կուրսղեկ շրջանավարտներին շնորհավորական խոսքեր հղելուց հետո հանձնեց ավարտական դիպլոմները: Ուսանողները ևս անմասն չմնացին և իրենց երախտիքի խոսքն ասացին ինչպես ղեկավարությանը, այնպես էլ յուրաքանչյուր դասավանդողին՝ խոստանալով հանդիպել որպես կայացած մասնագետներ:

